ԿԱՐԾԻՔ
ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ «ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1960-ական թվականներին գրականություն եկավ երիտասարդ բանաստեղծների մի սերունդ՝ Հովհաննես Գրիգորյան, Հրաչյա Սարուխան, Արմեն Մարտիրոսյան, Վարդան Հակոբյան, Սլավիկ Չիլոյան, ընթերցողներին քիչ հայտնի Ռաֆիկ Բազիկյան, Սեյրան Կարապետյան, Ռաֆիկ Մարգարյան, որն իր հետ պոեզիա բերեց նոր աշխարհայեցողություն, անհատ-ժամանակ, անհատ-հասարակություն, անհատ-բնություն հարաբերությունների նոր պատկերացումներ: Այդ սերնդի բանաստեղծներն անցան տառապանքի քառուղիներով: Նրանց առաջին ժողովածուները, նույնիսկ մամուլում տպագրված առանձին շարքերն ու բանաստեղծություններն արժանացան խիստ «քննադատության», որակվեցին որպես արևմտյան բանաստեղծների փորձն արհեստականորեն տեղայնացնելու անհաջող ջանքեր, պոեզիայի ազգային ակունքներից կտրվելու ճիգեր և այլ, և այլն:

Այդ սերնդի տաղանդաշատ ներկայացուցիչներից է Հենրիկ Էդոյանը, ում պոեզիայի ավանդույթի ու նորարարության խնդիրներն են ուսումնասիրության առարկա դարձրել Հռիփսիմե Զաքարյանը:

Դիսերտունա՞կ է, արդյոք, թեման, ի՞նչ նպատակ ու խնդիրներ է հետապնդում և իր առջև դնում հայցորդը: Սրանք թեկնածուական (և ոչ միայն) ատենախոսությանը ներկայացվող հիմնական պահանջներն են:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծությունների մասին շատերն են գրել, հիմնականում առանձին հոդվածների տեսքով: Սուրեն Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» մեծածավալ աշխատությունը, թերևս, առաջին փորձն է Հ. Էդոյանի պոեզիան արդի գրական զարգացումների համապատկերում արժևորելու, այդ համապատկերում նաև ավանդույթի և նորարարության խնդիրներին անդրադառնալու առումով: Նշենք, որ այդ ուսումնասիրությունն ուղեցույց կարող է հանդիսանալ սերնդի առանձին բանաստեղծներին ավելի հանգամանալից ներկայացնելու համար:

Ատենախոսության ներածության մեջ ատենախոսը արժանին է մատուցում բոլոր այն հեղինակներին, ովքեր անդրադարձել են Հ. Էդոյանի ժողովածուներին,

առանձին շարքերին: Սակայն տարօրինակ է մեզ թվում նրա ձևակերպումը. գրականագետների ճնշող մեծամասնությունը՝ Թոփչյան, Ավետիսյան, Քալանթարյան, Դեմիրճյան, Աբրահամյան և ուրիշներ «պոեզիային անդրադարձել են առանձին հոդվածներով», իսկ Հ. Մուսայելյանը, Ս. Գրիգորյանը և Ա. Ջրբաշյանը՝ «ըստ անհրաժեշտության», Ֆ. Բախչինյանը՝ «արտահայտիչ խորաթափանցությամբ»: Թեման, անտարակույս, դիսերտունակ է, և ատենախոսն իր առջև նպատակ է դրել «սահմանափակ ծավալի շրջանակում» «պոեզիայի և գիտության նորագույն նվաճումների հրամայականով» կատարել «լրացումներ, ճշգրտումներ, սահմանել բանաստեղծի տեղն ու դերը նորագույն գրականության պատմության զարգացման ընթացքում»:

Սրանով է ատենախոսը պայմանավորում ատենախոսության արդիականությունը և հիմնավորում թեմայի դիսերտունակությունը: Մոտեցումը ճիշտ է, և հեղինակը գրականագիտական պատշաճ մակարդակով, ուսումնասիրվող նյութի խոր իմացությամբ ատենախոսության երեք գլուխներում հիմնավոր կերպով լուծում է առաջադիր խնդիրները: Յուրաքանչյուր ատենախոսություն ունի իր դրական կողմերը և, բնականաբար, նաև թերությունները, որոնց հետ ատենախոսը կարող է համաձայնվել կամ չհամաձայնվել:

Ընդունված կարգ է, որ ընդդիմախոսն անդրադառնում է ատենախոսության առանձին գլուխներին: Թույլ տվեք լինել մի քիչ «կարգազանց», որովհետև ատենախոսն ինքը այն կներկայացնի հանգամանալից ու հիմնավոր կերպով: Սակայն որպես դրական հանգամանք նշենք, որ ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք և հանգամանալից եզրահանգումներն անմիջականորեն բխում են քննաբանությունների բովանդակությունից:

Դրական պետք է համարել, որ Հ. Էդոյանի պոեզիան ներկայացվում է դարակեսի զարգացումների համապատկերում, և ավելի ընկալելի են դառնում ավանդույթ-նորարարություն խնդիրները:

Շատ ճիշտ է ատենախոսը նկատում, որ Հ. Էդոյանի նորարարությունը խարսխված է հայ և համաշխարհային գրականությունների ավանդությունների վրա, և բանաստեղծը այս հիմքերի վրա է կառուցում իր բանաստեղծական աշխարհը,

սահմանագծում այն, բանաստեղծական խիտ բնակեցված տարածքում, առաջին ժողովածուներից սկսած, դրսևորում ինքնատիպության յուրահատկություններ:

Նորարարության և ավանդույթի խնդիրներն ատենախոսը քննարկում է արքետիպերի և միֆերի կիրառման, բանաստեղծական մետաֆիզիկական հոգևոր մշակութային ավանդույթների համատեքստում, ինչը վկայում է, որ նա ծանոթ է գրականագիտական և փիլիսոփայական մտքի արդի նվաճումներին և հաջողությամբ դրանց առնչությունները տեսնում է Հ. Էդոյանի պոեզիայում, ինչը, խոստովանենք դժվարամատչելի է և խոստովանենք նաև, որ ատենախոսը կարողացել է հաղթահարել այդ դժվարամատչելիությունը:

Ատենախոսության դրական կողմերից են նաև Հ. Էդոյանի պոեզիայում աստվածաշնչյան ավանդների պոետական պատկերավորման առանձնահատկությունների բացահայտումները, ինչն արվում է հատկապես «Ճանապարհի երգեր» շարքում: Ատենախոսն այդ շարքի «բանաստեղծություններում տեսնում է «ոչ միայն աստվածաշնչյան սյուժեների, պատկերների հեղինակային «մոդիֆիկացիան», այլ նաև հեղինակային մեկնաբանությունը, ավանդական սյուժեների յուրօրինակ վերապատմումը, որոնք օգնում են ընթերցողին հասկանալ պոետի մտադրությունը, ինչպես նաև սահմանում են շարքի յուրահատուկ պոետիկան»:

Այժմ մի քանի դիտարկումներ, որոնք ատենախոսությունն ավելի կատարյալ տեսնելու նպատակ են հետապնդում:

Ատենախոսության ծավալը՝ 203 էջ: Այդ ծավալը զգալիորեն կկրճատվեր, եթե մի շարք հայտնի իրողությունների հեղինակը մանրամասնորեն չանրադառնար: Օրինակ՝ «Հին Հունաստանի և Հռոմի մշակութային ծաղկման դարաշրջանում սկսվեցին ձևավորվել քաղաքային տարածությունները՝ որպես տիեզերական կարգավորվածության տարածական պատճեն» (էջ 72, տողատակ), էջ 80-ում ուրբանիզմի՝ որպես սիմվոլիզմի բնորոշ հատկանիշ, տոպիկայի մասին (էջ 80), նորից ուրբանիզմի մասին (էջ 81), Յունգի տեսության մասին (էջ 102), «Հարավային Ամերիկայի անտառաբնակ Գուախիրո կոչվող» ցեղախմբի հավատալիքների մասին ծավալուն անդրադարձները (էջ 114), ինչպես նաև կալոկագաթյան մարդու, Դեկարտի՝ հոգու և մարմնի սահմանած «տարբեր սուբստանցիաների» մասին

անդրադարձները (էջ 137)։ Այսպիսի հղումներով, մեջբերումներով ծանրաբեռնված են նաև 123, 128, 148, 152 էջերը, հատկապես կյանքի և մահվան թեմային միջնադարյան փիլիսոփայական հայեցակարգերին (էջ 162) անդրադառնալը, Միշել Ֆուկոյի, Յասպերսի տեսությունների մեկնաբանությունները։ Գովեստի արժանի է, իհարկե, ատենախոսի՝ այս ամենի իմացությունը, բայց, այնուամենայնիվ, ծանրաբեռնել ատենախոսությունը, կարծում ենք, հարկ չկար։

Օգտագործված գրականության ցանկը ընդգրկում է 248 սկզբնաղբյուր, առցանց աղբյուրներ, բառարաններ, ատենախոսություններ և սեղմագրեր, որոնց մեծ մասը վերը նշվածներին են վերաբերում, իսկ բառարաններն ընդգրկել օգտագործված գրականության ցանկում, բացարձակապես ավելորդ ծանրաբեռնվածություն է։

Նկատելի են նաև որոշ ոճական անհարթություններ, վրիպակներ, որոնք ատենախոսությունը հրատարակելու դեպքում (կարծում եմ՝ դա անհրաժեշտ է) կվերացվեն։

Եզրակացություն

Հռիփսիմե Արայի Զաքարյանը պաշտպանության է ներկայացրել ԲՈԿ-ի պահանջներին բավարար ատենախոսություն, որն աչքի է ընկնում ուսումնասիրվող նյութի խոր իմացությամբ։ Հատկապես կարևոր ենք համարում բանաստեղծությունն ընթերցելու (շատերն այն շփոթում են կարդալու հետ) Հռիփսիմեի նուրբ զգացողությունը, սեփական տեսակետներն արտահայտելու և դրանք հիմնավորելու ունակությունը։ Նշված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքը։ Ատենախոսն արժանի է իր հայցած գիտական աստիճանին, ինչի համար միջնորդում ենք խորհրդին։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
Բ. Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՐՏԻՆ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԻԼԱՎՅԱՆ

Հաստատում եմ պրոֆ. Մ. Գ. Գիլավյանի ստորագրությունը։

ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ,
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

19. 04. 2022թ.